ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«05» 12 2023 ք. Երևան

ՈՐՈՇՈՒՄ № 3

ԱՁ ԴԱՎԻԹ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-09/23>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ԱՁ Դավիթ Մնացականյանի (այսուհետ՝ Վաճառող) և <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) միջև 2023թ.-ի մարտի 21-ին կնքվել է <<Ապրանքի մատակարարման>> թիվ 2.48 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Համաձայն պայմանագրի №1 Հավելվածի Վաճառողը ստանձնել էր անխափան սնուցման աղբյուրների և մարտկոցների լիցքավորիչների մատակարարման պարտավորությունը և պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանված եղել մինչև 2023թ.-ի հունիսի 30-ը: ԱՁ Դավիթ Մանացականյանի կողմից խախտվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթները, այն է, Վաճառողը պայմանագրի 2.4.1 կետի պահանջների համաձայն պարտավոր էր Գնորդին հանձնել ապրանքները՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով: Սակայն մինչ օրս ԱՁ Դավիթ Մնացականյանի կողմից ապրանքների ոչ մի մատակարարում չի իրականացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ԱՁ Դավիթ Մնացականյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Ընկերության ընդհանուր բաժնի պետին՝ սույն որոշումը մեկօրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

Ա. Գասպարյան
Գլխավոր տնօրեն